ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

16 մայիսի երեքշաբթի 2023
տպագրության ԺԲ տարի

68
(2734)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ԶԲԱՂՎԱԾ ԵՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ՔՄԱՀԱՃՈՒՅՔՆԵՐՈՎ

«Ժողովուրդ» օրաթերթը գրել է, որ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունը՝ Նիկոլ Փաշինյանի գլխավորությամբ, հունիսին քաղաքական երկրորդ ժողովն է անցկացնելու Դիլիջանում: Ժողովին մասնակցելու են կառավարության անդամները՝ նախարարներ, փոխվարչապետներ, ԱԺ նախագահը, նրա տեղակալները, հանձնաժողովի նախագահները, տարածքային կազմակերպությունների ղեկավարներ եւ համայնքի ղեկավարներ, ինչպես նաեւ հրավիրյալ անձինք, որոնց կորոշի վարչությունը:

«Ժողովուրդ» օրաթերթն իր ՔՊ-ական աղբյուրներից տեղեկացավ, որ թեեւ ժողովի օրը դեռ հստակեցված չէ, բայց կուսակցությունում նախապատրաստական թեժ աշխատանքներ են տարվում:

ՔՊ-ականները հրավիրյալների ցանկն են հստակեցնում, ժողովի օրակարգի շուրջ են քննարկումներ անում, ինչպես նաեւ ժողովի անցկացման համար հյուրանոց են փնտրում:

Իշխանականները ջանք չեն խնայում, որ կուսակցության քաղաքական ժողովը բարձր մակարդակով անցնի, որպեսզի վարչության կեղծված ընտրություններից հետո Փաշինյանը գոհ մնա իրենցից:

«Ժողովուրդ» օրաթերթն այս առիթով զրուցեց Դիլիջան համայնքի ղեկավար Դավիթ Սարգսյանի հետ՝ հասկանալու, թե ինչ նախապատրաստական աշխատանքներ են տարվում ՔՊ ժողովի անցկացման համար, որոնք տեսանելի են քաղաքում:

«Համենայնդեպս ես տեղյակ չեմ այդ ամենի մասին»,-ասաց քաղաքապետը՝ խուսափելով կոնկրետ հարցերի պատասխանելուց:

«Ժողովուրդ» օրաթերթի լավատեղյակ աղբյուրները փոխանցում են, որ հայրենի իրավապահ համակարգը, ԱԺ ՔՊ խմբակցության մի խումբ պատգամավորներ, ԿԸՀ նախագահը, դատախազության եւ քննչական մարմինների անդամները շաբաթ եւ կիրակի թեժ քննարկումներ են ունեցել Ծաղկաձորում: Բանն այն է, որ հայրենի իշխանության ներկայացուցիչները, Քրեադատավարական օրենսգրքի հետ առնչվելով, մշտապես խնդիրների են բախվում: Դրանք վերաբերում են ձերբակալությունների ժամկետներին, դատարանների աշխատանքներին, դատական համակարգի ծանրաբեռնվածությանը: Իրավական համակարգը այս հարցերում մշտապես թեժ կռիվների մեջ է, որոնք ներքին բախումներ են ու երբեմն վերածվում են հանրային քննարկման: Իրավական համակարգը որոշել է հավաքվել, միմյանց լսել: Նշենք, որ ծաղկաձորյան հավաքը ղեկավարել է ԱԺ պետական- իրավական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Վլադիմիր Վարդանյանը, որին, ըստ մեր աղբյուրների, մերթ ընդ մերթ «օգնել է» ԿԸՀ նախագահ Վահագն Հովակիմյանը, որը թեեւ ԿԸՀ նախագահն է՝ անկախ մարմնի ղեկավար, բայց երբեմն ԱԺ պատգամավորի նախկին աշխատանքն է անում: Ներկաները թեժ քննարկել են նաեւ Հովակիմյանի՝ այդ հավաքին ներկա գտնվելու փաստը, քանի որ անհասկանալի է եղել բոլորի համար, թե անկախ համակարգի ղեկավարն ինչ գործ ունի նման հավաքներին: Հավելենք, որ Ծաղկաձոր են մեկնել նաեւ ՔՊ վերնախավի «սրտի» պատգամավորներ Արփի Դավոյանը, Լիլի Մինասյանը, Արմեն Խաչատրյանը, Ալխաս Ղազարյանը, ինչպես նաեւ Նիկոլ Փաշինյանի խորհրդական, գյումրեցի Նազելի Բաղդասարյանը: Իշխանության ներկայացուցիչները, կարելի է ասել, ժամանակ են անցկացրել, իսկ իրավապահ համակարգը թեժ քննարկել է իր ներքին խոհանոցը: Ըստ մեր աղբյուրների՝ համակարգում լուրջ դժգոհություններ կան, եւ որոշվել է առաջիկայում կրկին հանդիպել նույն ֆորմատով:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների համաձայն՝ 2020 թվականի սեպտեմբերի 27-ին սանձազերծված ռազմական գործողությունների հանգամանքների ուսումնասիրման նպատակով ստեղծված քննիչ հանձնաժողովը սպասում է Արցախի նախկին հրամանատար Ջալալ Հարությունյանի պատասխանին, որպեսզի կարողանա հանձնաժողովի նիստ հրավիրել, լսել նախկին հրամանատար-նախարարին: Ասել է թե՝ Ջալալ Հարությունյանը խոստացել է հանձնաժողովի նախագահ Անդրանիկ Քոչարյանին ներկայանալ քննիչ հանձնաժողով, բայց օրն ու ժամը պետք է իրեն հարմարեցնեն: Եվ, ահա, մեզ հայտնի է, որ նա ԱԺ կգնա հունիսի սկզբին, ու հանձնաժողովը անհամբեր սպասում է նրա հետ հանդիպմանը: «Ժողովուրդ» օրաթերթը գրել էր, որ 44-օրյա պատերազմի հանգամանքներն ուսումնասիրող քննիչ հանձնաժողով է հրավիրվելու ՊԲ նախկին հրամանատար Ջալալ Հարությունյանը: Առաջիկայում այս շարքը շարունակվելու է, եւ նոր հրավիրյալներ էլ կլինեն: Բանն այն է, որ քննիչ հանձնաժողովի գործունեությանը քիչ ժամանակ է մնացել, եւ պետք է նրանք աճապարեն: Հիշեցնենք, որ միայն ՔՊ-ականներից կազմված այդ հանձնաժողովի գործունեության իրական նպատակը պատերազմի հնարավոր հանգամանքները Նիկոլ Փաշինյանի վրայից մաքրելն է:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների համաձայն՝ ՀՀ քննչական կոմիտեն Ապարանի կրակոցների գործով նախաքննության ավարտ է հայտարարել եւ գործը ուղարկել է դատարան: Գրել էինք, որ գործով հարցաքննվել էր ԱԺ ՔՊ-ական պատգամավոր Մաթեւոս Ասատրյանի եղբայրը՝ Մնացական Ասատրյանը, որը առավել հայտնի է Գռզո մականունով: «Ժողովուրդ» օրաթերթի ձեռքում է հայտնվել ԱԺ ՔՊ խմբակցության պատգամավոր Մաթեւոս Ասատրյանի եղբոր ցուցմունքը, թե նա ինչ է պատմել իրավապահներին ողբերգական կրակոցների գործով: Մասնավորապես, նա իր ցուցմունքում հայտնել է, որ կրակոցների օրը՝ 2022 թվականի հունիսի 19-ի առավոտվանից, տանն է եղել, զբաղվել է տան գործերով: Կեսօրին (հստակ ժամը չի հիշում) իր տուն եկան Արագածոտնի փոխմարզպետ Էդգար Փարվանյանը եւ Ապարանի գնդի հրամանատար, իր իմանալով՝ ներկայումս ՊՆ նախարարի խորհրդական Ռազմիկ Պետրոսյանը: Նրանք Ռազմիկ Պետրոսյանի ՊՆ համարանիշներով «Լեքսուս» մակնիշի ավտոմեքենայով էին եկել: Նստած տանը դեսից դենից՝ կենցաղային թեմաներով են զրուցել, հաց կերել: Էդգարը իր ընտանիքի հետ մտերիմ փոխհարաբերությունների մեջ է, Ռազմիկը՝ նույնպես: Հստակ ժամը չի հիշում, իրեն զանգահարեց... Իսկ թե ով է զանգահարել պատգամավորի եղբորը, ուր է գնացել նա եւ ինչի է ականատես եղել, ներկայացնում ենք բացառիկ փաստաթղթերով (տես լուսանկարը): Հիշեցնենք, որ նախորդ տարի՝ հունիսի 19-ին, հնչած կրակոցների հետեւանքով սպանվել էր 3 անձ՝ 27-ամյա պայմանագրային զինծառայող Հմայակ Միքայելյանը, Տիգրան Հարությունյանը, որն Ապարանի համայնքապետ Կարեն Եղիազարյանի հարազատներից էր, աշխատում էր «Գնթունիք» սուպերմարկետում, եւ Սամվել Սանդրոյանը: Դեպքից հետո անմիջապես լուրեր տարածվեցին, թե ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանին հայհոյելու համար վիճաբանություն է սկսվել մի խումբ երիտասարդների եւ ՔՊ-ական պատգամավոր Մաթեւոս Ասատրյանի ու Արագածոտնի փոխմարզպետ Էդգար Փարվանյանի հարազատների միջեւ: Ըստ այդ լուրերի՝ վիճաբանության ընթացքում ՔՊ-ական պատգամավորների հարազատները ավտոմատներով կրակել են Փաշինյանին հայհոյած երիտասարդների վրա: Գործով կալանավորված է մեկ անձ՝ Արմեն Հովհաննիսյանը:



ՀԱՆԴԻՊՈՒՄ

ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԱՄԲՈՂՋԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՓՈԽԱԴԱՐՁ ՃԱՆԱՉՈՒՄ

Երեկ Բրյուսելում տեղի ունեցավ Փաշինյան-Միշել-Ալիեւ հանդիպումը, որը տեւել էր մոտ 4 ժամ: Հանդիպումը կայացել է Եվրոպական Միության կենտրոնակայանում: Հանդիպումից հետո Շառլ Միշելը հանդես էր եկել հայտարարությամբ. «Հայաստանը եւ Ադրբեջանը հաստատել են փոխադարձ տարածքային ամբողջականության ճանաչումը՝ 1991թ. Ալմա-Աթայի հռչակագրի հիման վրա, եւ հարգել Հայաստանի 29.8 հազար քառ. կմ եւ Ադրբեջանի 86.6 հազար քառ. կմ տարածքները»,- բանակցություններից հետո ասել էր Շառլ Միշելը: Վերջինս հավելել էր, որ հաջորդ քայլը լինելու է սահմանների դելիմիտացիան՝ 1991թ.-ի Ալմա Աթայի հռչակագրով: Այն ենթադրում է տարածքային ամբողջականության փոխադարձ ճանաչում եւ, մասնավորապես, Հայաստանի տարածքային ամբողջականության ճանաչում՝ 29,8 հազար քառ. կմ-ի սահմաններում, եւ Ադրբեջանինը՝ 86,6 հազար քառ. կմ-ի սահմաններում: «Կողմերն ունեն առաջխաղացում»,- ասուլիսին հայտարարել էր Եվրոպական խորհրդի նախագահ Շառլ Միշելը: Հանդիպման ընթացքում Հայաստանի եւ Ադրբեջանի ղեկավարները պատրաստակամություն են հայտնել տարածաշրջանում համապարփակ եւ տեւական խաղաղություն հաստատել: Armlur.am-ը այս հայտարարությունների հետ կապված զրուցել է Արցախի նախագահի խորհրդական Դավիթ Բաբայանի հետ:

-Պարոն Բաբայան, նախօրեին տեղի ունեցավ եռակողմ հանդիպում. ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը, Ադրբեւանի նախագահ Իլհամ Ալիեւը եւ ԵՄ ղեկավար Շառլ Միշելը հանդիպում ունեցան Բրուսելում, որից հետո Շառլ Միշելը հանդես եկավ մի հայտարարությամբ՝ կոնկրետ նշելով որ երկու կողմերը ճանաչել են իրենց տարածքային ամբողջականությունը: Հայաստանը ճանաչել է Ադրբեջանի 86 600 քմ. տարածքը. դա ի՞նչ է նշանակում, արդյոք սա նշանակո՞ւմ է, որ Արցախը ընդգրկվում է Ադրբեջանի կազմի մեջ:

-Նախ եւ առաջ ասեմ, որ Միշելը իրեն նմանեցրեց Չեմբեզլենի հետ, եւ սա միանշանակ է, որ ներկայիս Եվրոպան իրեն նույնացրեց նացիստների հետ: Այն, ինչ ասում է այդ մարդը, ուղղակի խայտառակություն է, սա հանցագործություն է ժողովրդավարության, մարդու իրավունքների նկատմամբ: Սա, փաստորեն, նշանակում է, որ բոլոր այդ գաղափարները ֆիկցիա են դարձել հենց նույն այդ կազմակերպությունների կողմից, որոնք թվում է թե պետք է պահմանեն այդ ամենը: Ի՞նչ է նշանակում ժողովրդավարական Արցախը բռնակցել նացիստական երկրի հետ: Այսինքն՝ ենոյնն կրկնում, ուրիշ ոչ մի բան: Ուժերը բոլորը նույն մոտեցումը ունեն. սա բոլորիս համար պետք է պարզ լինի: Բայց մենք պետք է շնորհակալ լինենք մի բանի համար, որ վերջապես բացահայտվեց ճշմարտությունը, որ իրենք այդպես են տեսնում. սա անընդունելի է մեզ համար: Պետք է նախ եւ առաջ հասկանանք՝ ով ենք մենք եւ ինչ ենք ուզում: Փաստորեն, մեզ մնում է 2 բան. նախեւառաջ Հայաստանը պետք է հաստատի կամ հերքի Քեմբերլենի ասածը, արդյոք Մյունխենյան դավադրություն է տեղի ունենում, թե չէ՝ թող դա հայտարարեն պաշտոնապես: Պետք է Հայաստանը պատասխանի պաշտոնապես, հստակ, քանի որ մենք յաթաղանի տակ ենք: Պետք է հասկանալ՝ ովքեր են մասնակցում այս դավադրությանը: Պետք է հասկանալ՝ ուր են այդ մարդու իրավունքների պաշտպանները, որոնք բղավում էին, ուր են հակառուսական մոլագարները՝ մոռանալով ազգային շահը, ո՞ւր են: Իսկ մենք այդ իրավունքը վստակել ենք բոլորի հետ գլուխներս բարձր խոսելու, քանի որ չենք եղել ո՛չ ռուսամոլ, ո՛չ արեւմտամոլ. միշտ եղել ենք ազգային շահերի կողմ, հիմա պատասխաններ ենք պահանջելու բոլորից՝ թե՛ մեր իշխանություններից այստեղի, թե՛ Հայաստանի իշխանություններից:

ՔՐԻՍՏԻՆԵ ՄՈՒՇԵՂՅԱՆ

ԼՈՒՐԵՐ

ՀԱՆՐԱՀԱՎԱՔ ԿԱՆՑԿԱՑՎԻ

Արցախի «Միասնական հայրենիք» կուսակցության նախագահ, ԱՀ ՊԲ նախկին հրամանատար Սամվել Բաբայանն այսօր Ստեփանակերտի Վերածննդի հրապարակում հանրահավաք է հրավիրել:

ArmLur.am-ը տեղեկացավ, որ հանրահավաքը կրելու է «Արցախի ժողովուրդն է իր ճակատագրի իրավատերը» խորագիրը:

Հանրահավաքի մասնակիցները մտադիր են Արցախում ստեղծված իրավիճակից ելքի իրենց տեսլականը ներկայացնել, ինչպես նաեւ այդ կապակցությամբ Արցախի իշխանություններին պահանջներ ներկայացնել:

«Ժողովուրդ» օրաթերթը վաղուց է անդրադարձել Սամվել Բաբայանի ակտիվությանը Արցախում:

Գրել էինք, որ վերջինս պարբերաբար հանդիպումներ է ունենում Արցախի տարբեր քաղաքական ուժերի, քաղաքացիների հետ, պարբերաբար նաեւ փողոց դուրս գալու կոչեր է անում:

ՔՐԻՍՏԻՆԵ ՄՈՒՇԵՂՅԱՆ

ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԿԱՏԱՐՎԵՆ

«Ճանապարհային երթեւեկության մասին» օրենքում փոփոխություններ կկատարվեն: Armlur.am-ի տեղեկություններով՝ առաջարկվում է նախատեսել նոր տեսակի՝ առանձնահատուկ պահանջարկ ունեցող համարանիշներ: Դրանք կլինեն տառեր եւ թվեր, որոնք մեծ պահանջարկ ունեցող համարանիշներից տարբերվելու են տառերի ու թվերի համադրությամբ (օրինակ՝ ՕՕ++ՕՕՕ եւ դրա տարբեր կոմբինացիաները): Առանձնահատուկ պահանջարկ ունեցող համարանիշների օգտագործման առաջնահերթության իրավունքը ստանալու համար կիրականացվի աճուրդ:

Այսպիսով, օրենքի նախագծի ընդունմամբ ակնկալվում է նախատեսել իրավական հնարավորություն առանձնահատուկ պահանջարկ ունեցող համարանիշեր սահմանելու եւ դրանք աճուրդային կարգով օտարելու նպատակով: Հիմնավորման մեջ նշվում է, որ նախագծի ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ գնալով նվազում է մեծ պահանջարկ ունեցող հաշվառման համարանիշեր ձեռք բերելու պահանջարկը, իսկ քաղաքացիներից ստացված դիմումների եւ ուսումնասիրությունների արդյունքում պարզ է դարձել, որ քաղաքացիների համար առավել մեծ հետաքրքրություն են ներկայացնում առավել գեղեցիկ եւ բարձր արժեք ունեցող համարանիշերը:

Հավելենք, որ այս նախագիծը ընդունվել է կառավարության կողմից եւ ուղարկվել ԱԺ:

ՆԱԻՐԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԱՐԱՅԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ ԱՌԱՔԱՐԿԸ

ԱՀ նախագահ Արայիկ Հարությունյանը հայտարարություն է տարածել, որտեղ ասվում է.

«Այսօր Արցախի Հանրապետության Ազգային ժողովի նախագահի կողմից ինձ է փոխանցվել Ստեփանակերտի Վերածննդի հրապարակում տեղի ունեցած հավաքի մասնակիցների հայտարարությունը:

Ելնելով ԱՀ Սահմանադրությամբ իմ ստանձնած պարտավորություններից ու լիազորություններից, հավաքին մասնակցած մեր քաղաքացիների նկատմամբ հարգանքից, հաշվի առնելով լսված լինելու նրանց իրավունքը՝ որոշել եմ ընդառաջ քայլ կատարել: Ուստի հավաքի ներկայացուցիչներին առաջարկել եմ վաղվանից սկսել քննարկումներ ու խորհրդակցություններ նրանց կողմից ներկայացված առաջարկների ու ծրագրերի շուրջ:

Ինչպես նախկինում, այնպես էլ հիմա պատրաստ եմ օգտագործել յուրաքանչյուրի գիտելիքները եւ փորձը՝ ի նպաստ մեր երկրի անվտանգության, խաղաղության եւ մեր ժողովրդի բարօրության:

Միաժամանակ ընդգծում եմ, որ հատկապես այս ճգնաժամային պայմաններում մենք պարտավոր ենք ցուցաբերել զսպվածություն, խոհեմություն եւ պատասխանատվություն՝ առաջնորդվելով բացառապես Արցախի Հանրապետության ու մեր ժողովրդի շահերով»:

Հիշեցնենք, որ Արցախի «Միասնական հայրենիք» կուսակցության նախագահ, ԱՀ ՊԲ նախկին հրամանատար Սամվել Բաբայանն այսօր Ստեփանակերտի Վերածննդի հրապարակում հանրահավաք է հրավիրել:

ԿԱԼԱՆՔԸ ԵՐԿԱՐԱՁԳՎԵԼ Է

Գրիգորի Խաչատուրովի կալանքի ժամկետը 3 ամսով երկարաձգվել է:

Տեղեկությունը լրագրողների հետ զրույցում ասաց նրա փաստաբան Հակոբ Ենոքյանը:

Փաստաբանի խոսքով՝ դատարանի որոշումը դեռ իրենց չի տրամադրվել. երբ տրամադրվի, ավելի կոնկրետ հայտարարություններ կանեն:

«Բոլորիս համար էլ պարզ էր, որ նման վճիռ է լինելու. անակնկալ չէր»,- ասաց փաստաբանը:

ԻՐԱՎԻՃԱԿ

ՄԻԱՑԵԼ Է ՍՏՈՐԱԳՐԱՀԱՎԱՔԻՆ

Մի քանի օր է՝ ԱԺ պատգամավոր Թագուհի Թովմասյանը Երեւանում իրականացնում է ստորագրահավաք՝ ի պաշտպանություն Արցախի ժողովրդի, որը կանգնած է էթնիկ զտման վտանգի առաջ: Հազարավոր քաղաքացիներ են արդեն իսկ միացել ստորագրահավաքին: «Ներկայացվելու են ՄԱԿ-ին, ԵԽԽՎ, Եվրոպառլամենտ, որպեսզի մենք ասենք, որ համաձայն չենք այս քաղաքականության հետ, եւ դուք պետք է փրկեք 120,000 քաղաքացու»,- ասել էր Թովմասյանը՝ ի պատասխան այն հարցին, թե ինչ է տալու ստորագրահավաքը:

Ի դեպ, ՔՊ-ական որոշ պատգամավորների հարազատներ եւս միացել են ստորագրահավաքին: Մասնավորապես, Irakanum.am-ը ֆիքսել է, որ Թագուհի Թովմասյանի նախաձեռնած ստորագրահավաքին միացել է նաեւ ՔՊ խմբակցության քարտուղար Արթուր Հովհաննիսյանի քեռին՝ դերասան Ռուբեն Հովհաննիսյանը: Նա ակտիվ մասնակցել է նաեւ Նիկոլ Փաշինյանի հեռացման դեմ բողոքի գործողություններին եւ չի կիսում ո՛չ ազգականի, ո՛չ էլ նրա քաղաքական թիմի հայացքները:

Հավելենք, որ Ռուբեն Հովհաննիսյանն ու Արթուր Հովհաննիսյանը գրանցված են նույն հասցեում:

ԳՈՐԾՈՒՂՈՒՄ՝ ՀԱՐԵՎԱՆ ԵՐԿԻՐ

Մայիսի 17-18-ի Հայաստանից խորհրդարանական պատվիրակություն կգործուղվի հարեւան երկիր՝ Վրաստան:

ArmLur.am-ը տեղեկացավ, որ պատվիրակությունը Թբիլիսում կմասնակցի Հայաստանի Ազգային ժողովի արտաքին հարաբերությունների մշտական հանձնաժողովի եւ Վրաստանի խորհրդարանի արտաքին հարաբերությունների հանձնաժողովի համատեղ նիստի աշխատանքներին:

Վրաստան գործուղվող պատվիրակության կազմում կլինեն ԱԺ արտաքին հարաբերությունների մշտական հանձնաժողովի նախագահ Սարգիս Խանդանյանը, ՔՊ խմբակցության պատգամավորներ Էդուարդ Աղաջանյանը եւ Հռիփսիմե Գրիգորյանը:

Պատգամավորների գործուղման հետ կապված ծախսերը՝ ճանապարհածախսը եւ օրապահիկը, կկատարվի ՀՀ պետբյուջեի հաշվին, իսկ գիշերավարձի վճարումը կատարում է հրավիրող կողմը:

Թ. ԹՈՎՄԱՍՅԱՆԻ ՊԱՀԱՆՋԸ

ՊԱՐՏԱՎՈՐ Է ՊԱՏԱՍԽԱՆԵԼ

ԱԺ մարդու իրավունքների պաշտպանության եւ հանրային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ, անկուսակցական Թագուհի Թովմասյանը սոցցանցի իր էջում գրում է. «Եվրոպական խորհրդի նախագահ Շառլ Միշելը հայտարարել է, որ Հայաստանն ու Ադրբեջանը ճանաչել են միմյանց տարածքային ամբողջականությունը:

«Առաջնորդները ոչ երկիմաստ հավատարմություն են արտահայտել 1991 թ. Ալմա-Աթայի հռչակագրին եւ համապատասխանաբար Հայաստանի ամբողջականությանը՝ 29.8 հազ. քառ. կմ տարածքով, եւ Ադրբեջանի ամբողջականությանը՝ 89.6 հազ. քառ. կմ տարածքով: Վերջնական սահմանազատումը կհամաձայնեցվի բանակցությունների ընթացքում»,- հայտարարել է Շառլ Միշելը, որի խոսքն ավելի ուշ խմբագրվեց ԵԽ կայքում. 89 600 քառ. կմ-ը դարձավ 86 600 քառ. կմ:

Այս իրավիճակում մի քանի հարցեր են առաջանում, որոնց պիտի Նիկոլ Փաշինյանը հստակ, ուղիղ, առանց խաբելու պատասխանի.

- Շ. Միշելի կողմից հնչեցված հայտարարությունից հարց է առաջանում. արդյոք Ադրբեջանի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության տարածքը ճանաչե՞լ եք որպես ներկայիս Ադրբեջանի տարածք, եթե դրա մեջ մտնում է նաեւ Արցախի Հանրապետության փոքրացած տարածքը: Ինչու՞ ոչ մի խոսք չկա Արցախի մասին:

- Հնչեցնելով խորհրդային Ադրբեջանի տարածքային թիվը՝ ի՞նչ հիմքով եք չեղարկել խորհրդային գործող օրենսդրությամբ ինքնորոշված Արցախի Հանրապետության գոյությունը, եւ, ի հակառակ մեր միասնական պայքարի, միջազգային իրավունքի, սովետական օրենսդրության, Արցախը հանձնում եք Ադրբեջանին:

-Դուք ինչո՞ւ եք իրավունք վերապահել Ձեզ խոսելու հայ ժողովրդի անունից՝ Արցախը հանձնելով Ադրբեջանին: 10 օրից ավելի իմ կողմից նախաձեռնված ստորագրահավաքը հակառակի մասին է խոսում. մի քանի հարյուր հազար ստորագրություն ենք հավաքել արդեն, եւ պետք է ասեմ, որ հայերի մեծամասնությունը Արցախը չի ընդունում Ադրբեջանի կազմում:

- Ի՞նչ իրավունքով եք չեղարկում Արցախի ժողովրդի ինքնորոշման իրավունքը: Ձեր գործողությունները հակասում են ՀՀ Գերագույն խորհրդի կողմից 1992թ. հուլիսի 8-ի որոշմանը, որի 2-րդ կետում ասվում է. «Հայաստանի Հանրապետության համար անընդունելի համարել միջազգային կամ ներպետական ցանկացած փաստաթուղթ, որտեղ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը նշված կլինի Ադրբեջանի կազմում»:

Այսինքն՝ Նիկոլ Փաշինյան, Ձեր կողմից ստորագրված ցանկացած այսպիսի փաստաթուղթ լեգիտիմության լուրջ խնդիր ունի:

- Ի՞նչ իրավունքով եք սահմանափակում Ստեփանակերտի եւ Բաքվի բանակցությունները միայն իրավունքների եւ անվտանգության օրակարգով:

- Ճանաչելով Ադրբեջանի տարածքային ամբողջականությունը՝ անկլավների հարցի լուծումն ինչպե՞ս եք ապահովելու. Հայաստանից քանի՞ անկլավային տարածք եք խոստացել հանձնել Ադրբեջանին եւ ի՞նչ կստանաք դրա դիմաց:

- Եվրոպական Միության հարգելի՛ գործընկերներ, գերիների, անհետ կորածների, բռնությամբ անհետացածների վերադարձը պետք է տեղի ունենար պատերազմից անմիջապես հետո, սակայն մոտ 3 տարի է՝ մեր գերիները դարձել են քաղաքական առեւտրի առարկա, ինչը միջազգային մարդասիրական իրավունքի տեսանկյունից խիստ անընդունելի է: Անհետ կորածների որոնողական աշխատանքները 2022թ. հունվարից դադարեցված են:

Այս հարցերի պատասխանները Նիկոլ Փաշինյանը պարտավոր է տալ՝ առանց ստելու:

ԼՈՒՐԵՐ

ՕԳՆՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՓԱԹԵԹ

Մեծ Բրիտանիայի վարչապետ Ռիշի Սունակը հայտարարել է, որ Լոնդոնն Ուկրաինային օգնության նոր փաթեթ կտրամադրի, որի մեջ կլինեն նաեւ զենիթային հրթիռներ եւ մեծ հեռահարության դրոններ: Այս մասին տեղեկացրել է Sky News հեռուստաալիքը՝հղում կատարելով Բրիտանիայի կառավարությանը:

Հեռուստաալիքի տվյալներով՝ խոսքն այն դրոնների մասին է, որոնց թռիչքի հեռահարությունը կազմում է ավելի քան 200 կիլոմետր:

Ուկրաինայի նախագահ Վլադիմիր Զելենսկին մայիսի 15-ին ավելի վաղ հայտարարել էր, որ ժամանել է Լոնդոն, որտեղ մտադիր է հանդիպել Մեծ Բրիտանիայի վարչապետ Ռիշի Սունակի հետ:

ՔՆՆԱՐԿՈՒՄ՝ ՀԵՌԱԽՈՍԱԶՐՈՒՅՑՈՎ

Ադրբեջանի արտաքին գործերի փոխնախարար Էլնուր Մամեդովը հեռախոսազրույց է ունեցել ԱՄՆ պետքարտուղարի Եվրոպայի եւ Եվրասիայի հարցերով օգնական Էրիկա Օլսոնի հետ, կողմերը քննարկել են իրավիճակը Հարավային Կովկասում, Բաքվի եւ Երեւանի հարաբերությունների կարգավորմանն ուղղված քայլերը:

«Մամեդովը եւ Օլսոնը հեռախոսազրույցի ընթացքում քննարկել են ադրբեջանաամերիկյան երկկողմ հարաբերությունները, ընթացիկ իրավիճակը տարածաշրջանում, Բաքվի եւ Երեւանի միջեւ հարաբերությունների կարգավորմանն ուղղված քայլերը»,- տեղեկացրել են ադրբեջանական ԶԼՄ-ները՝ հղում կատարելով Ադրբեջանի ԱԳՆ-ին:

Մամեդովն ընդգծել է, որ Ադրբեջանը շահագրգռված է Հայաստանի հետ հարաբերությունների կարգավորմամբ, ուստի խաղաղության պայմանագրի կնքման հիմնական նախաձեռնողն է:

«Նա նշել է, որ, չնայած դրան, Հայաստանը խոչընդոտում է խաղաղության գործընթացին, այդ թվում՝ Երեւանի վերջին սադրանքները սահմանին վնաս են հասցնում խաղաղության բանակցությունների միջազգային ջանքերին»,- ընդգծել է գերատեսչությունը:

«Հեռախոսազրույցի ընթացքում կողմերը կարծիքներ են փոխանակել փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող երկկողմ եւ տարածաշրջանային հարցերի վերաբերյալ»,- մեջբերել են ԶԼՄ-ները:

5 ԱՆՁ ԿԱԼԱՆԱՎՈՐՎԵԼ Է

ԹՄՐԱՄԻՋՈՑՆԵՐԻ ԱՊՕՐԻՆԻ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ՇՂԹԱ

ՀՀ ոստիկանության կոմիտեի ԵՔՔՎ Շենգավիթ վարչական շրջանի ոստիկանական բաժնում գործող հրեական վարույթի շրջանակներում բացահայտվել է թմրամիջոցների ապօրինի շրջանառության շղթա, պարզվել է դրանում ներգրավված մասնակիցներից 6-ի հանցանքը: Մասնավորապես՝ 2023թ. ապրիլի 5-ին, ապօրինի թմրամիջոց ձեռք բերելու եւ օգտագործելու կասկածանքով, Շենգավիթ վարչական շրջանի ոստիկանական բաժին է ներկայացվել Երեւան քաղաքի 24-ամյա մի բնակիչ, որի անձնական խուզարկությամբ հայտնաբերվել է 0.41 գրամ քաշով Մեթամֆետամին տեսակի թմրամիջոց:

Դեպքի առթիվ նախաձեռնված քրեական վարույթի, նաեւ ստացված նոր տվյալների հիման վրա՝ հաջորդաբար նախաձեռնված այլ վարույթների շրջանակում տակտիկական առումով ճշգրիտ մշակված վարութային եւ ապացուցողական գործողությունների, քրեադատավարական օրենքով նախատեսված՝ համագործակցության վարույթի կիրառման արդյունքում բացահայտվել է հաջորդաբար միմյանց նշված թմրամիջոցներ իրացնելու շղթա, որում ներգրավված անձանցից 6-ի հանցությունը հաջողվել է պարզել:

Նրանց անձնական, ինչպես նաեւ բնակության վայրերում կամ ավտոմեքենայում կատարված խուզարկություններով հայտնաբերվել են փայլաթիթեղով, պոլիէթիլենով փաթեթավորված՝ Մեթամֆետամինի, Ափիոնի, Հաշիշի նմանվող զանգվածներով, տարբեր քաշերով տասնյակից ավելի փաթեթներ: Քննությամբ ձեռք բերված փաստական տվյալներով պարզվել է, որ շղթայում ներգրավված անձանցից մեկը՝Հ.Բ.- ն, ավտոմեքենայի առուվաճառքի գործընթացի շրջանակում 40-ամյա տղամարդուն առաջարկել է, որպեսզի ավտոմեքենայի արժեքի մի մասի գումարի դիմաց նրան տա կրիստալ տեսակի թմրամիջոց եւ այդկերպ վճարի ավտոմեքենայի համար պարտք մնացած գումարը:

Համաձայնության գալով՝ այդ անձը 40-ամյա տղամարդու բնակության հասցեի մոտ տեղադրել է 100 գրամ կրիստալ տեսակի թմրամիջոց, որից հետո վերջինս դրա մի մասն իրացրել է 24-ամյա մեկ այլ անձի, իսկ մնացածը մաս-մաս՝ քննությամբ դեռեւս չպարզված անձանց: Քննությամբ ձեռք բերված փաստական տվյալներով՝ հանցավոր շղթայում ներգրավվել է նաեւ Հ.Բ.-ի ընկերուհին՝ Վաղարշապատ քաղաքի բնակչուհի, որի բնակության վայրում կատարված խուզարկությամբ, բացի բազմաթիվ փաթեթներով տարբեր տեսակի թմրամիջոցների զանգվածներով փաթեթներից, հայտնաբերվել են նաեւ էլեկտրոնային կշեռքներ, 45 հատ 100 եվրո անվանական արժեքով առերեւույթ կեղծ թղթադրամներ, բազմաթիվ տարբեր չափերի զիպ փականով պոլիէթիլենային տոպրակներ, կտրատված փայլաթիթեղներ, ապակե կոլբաներ, ինչպես նաեւ թմրամիջոցների օգտագործման, իրացման համար օգտագործվող այլ իրեր:

Հայտնաբերված զանգվածներով նշանակված դատաքիմիական փորձաքննություններով հաստատվել է, որ դրանք տարբեր տեսակի թմրամիջոցներ են: Օբյեկտիվ եւ բազմակողմանի քննություն ապահովելու նպատակով հանցավոր շղթայի էպիզոդների վերաբերյալ նախաձեռնված մի քանի վարույթները միացվել են մեկ վարույթում: Միջնորդություններ են ներկայացվել հսկող դատախազին՝ ինքնությունը պարզված վերոհիշյալ վեց անձի նկատմամբ հանրային քրեական հետապնդում հարուցելու մասին, որոնք բավարարվել են: Նրանց մեղադրանքներ են ներկայացվել՝ՀՀ քրեական օրենսգրքի 396-րդ հոդվածի կամ 393-րդ հոդվածի տարբեր մասերով կամ դրանց համակցություններով: Միջնորդություններ են ներկայացվել դատարան՝ բոլորի նկատմամբ որպես խափանման միջոց կալանավորումն ընտրելու վերաբերյալ, որոնցից 5-ը բավարարվել է, իսկ մեկը բավարարվել է մասնակի՝ կիրառելով «վարչական հսկողություն» այլընտրանքային խափանման միջոցը:

Նախաքննությունը շարունակվում է: Ձեռնարկվում են անհրաժեշտ միջոցառումներ՝ թմրամիջոցների ձեռք բերման աղբյուրը (աղբյուրները), հանցավոր շղթայում ներգրավված այլ անձանց ինքնությունը պարզելու, նրանց հայտնաբերելու եւ վարույթն իրականացնող մարմնին ներկայացնելու, ինչպես նաեւ կատարված խուզարկություններից մեկի ընթացքում հայտնաբերված եւ առգրավված բազմաթիվ կեղծ թղթադրամների ծագումնաբանությունը, դրա հետ կապված հանցագործություն կատարած անձանց շրջանակը պարզելու ուղղությամբ:

ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ՊՈՂՈՏԱ

ՎԵՃ, ԾԵԾԿՈՏՈՒՔ, ՄԱՐՄՆԱԿԱՆ ՎՆԱՍՎԱԾՔՆԵՐ

Մայիսի 14-ի ժամը 00.30-ին հիվանդանոցից հաղորդում է ստացվել, որ Հյուսիսային պողոտայից ճակատի պատռած վերքով բուժօգնության է դիմել 22-ամյա երիտասարդ: Բողեներ անց ոստիկանություն հաջորդ ահազանգն է ստացվել. կրծքավանդակի կտրած-ծակած վերքով բուժօգնության է դիմել Կոտայքի մարզի Ակունք գյուղի 26-ամյա մի բնակիչ:

ՆԳՆ ոստիկանության ՊԾ ծառայողները ժամը 00.05-ին Հյուսիսային պողոտայի եւ Թումանյան փողոցի խաչմերուկում հայտնաբերել, մարմնական վնասվածք պատճառելու կասկածանքով ձերբակալել եւ Կենտրոնական բաժին են տեղափոխել 34-ամյա երկու երիտասարդի, որոնցից մեկը՝Գյումրիի, մյուսը՝Ալավերդու բնակիչ: Խուզարկությամբ ալավերդցու մոտ հայտնաբերվել է արնանման հետքերով դանակ:

Ոստիկանության Կենտրոնական բաժնի քրեական հետախույզները ձեռնարկած միջոցառումների արդյունքում պարզել են, որ Հյուսիսային պողոտայի ռեստորաններից մեկում տեղի ունեցած վիճաբանության ժամանակ Կոտայքի մարզի Ակունք գյուղի 26-ամյա եւ Արթիկ քաղաքի 22-ամյա երկու բնակիչ, կոպիտ կերպով խախտելով հասարակական կարգը, ծեծի են ենթարկել բուժօգնության դիմած եւ պարեկների կողմից բերման ենթարկված երիտասարդներին, այդ ընթացքում էլ գյումրեցի 34-ամյա երիտասարդը դանակահարել էր 26-ամյա ակունքցուն:

Երիտասարդները եւ կազմված փաստաթղթերը ներկայացվել են նախաքննական մարմին:

ԼՈՒՐԵՐ

151 ՄԻԱՎՈՐ ՌԱԶՄԱՄԹԵՐՔ

2023 թվականի մայիսի 8-ից մայիսի 15-ն ընկած ժամանակահատվածում ԱԻ պետական ծառայության կենտրոնական ու տարածքային ստորաբաժանումների ճգնաժամային կառավարման կենտրոններում գրանցվել է 2034 զանգ, որից 13-ը՝ տեխնածին, 32-ը՝ կենցաղային բնույթի կանչեր են: Արագ արձագանքման հատուկ ստորաբաժանման օպերատիվ խմբերը շաբաթվա ընթացքում կատարել են փակված 4 դռան եւ 14 վերելակի բացում: Բնակչությանը օգնություն ցուցաբերելու նպատակով 2 ելք է կատարվել: Անցած շաբաթվա ընթացքում օձի հայտնաբերման մասով 1 կանչ է գրանցվել: Մայիսի 11-ին Ստեփանակերտ քաղաքի Վ. Վաղարշյան փողոցի տներից մեկի բակում օձ է հայտնաբերվել: Արագ արձագանքման հատուկ ստորաբաժանման օպերատիվ խումբը հայտնաբերել է սողունին եւ տեղափոխել անվտանգ տարածք: Անձրեւային եղանակով պայմանավորված՝ նվազել են հրդեհի դեպքերը: Հրշեջ փրկարարներն անցած շաբաթվա ընթացքում կատարել են 1 ելք: Մայրաքաղաքի Մ. Մաշտոցի 4 հասցեում 2 էլեկտրական անջատիչ է այրվել: Հրշեջ փրկարարները մարել են հրդեհը եւ ապահովել բնակիչների անվտանգությունը: Անցած շաբաթվա ընթացքում ԱԻՊԾ սակրավորները կատարել են 3 ելք: Հայտնաբերվել է շուրջ 151 միավոր տարբեր տեսակի ու տրամաչափի ռազմամթերք: Սակրավորները արձագանքում են քաղաքացիների՝հայտնաբերված, չպայթած զենք-զինամթերքի մասով բոլոր ահազանգերին՝անհրաժեշտության դեպքում տեղում իրականացնելով պայթեցման աշխատանքներ: Ծառայության տնօրենի անմիջական հրամանով՝աշխատանքներ են տարվում բնական աղետների հետեւանքները մեղմացնելու, սպասվող հրդեհավտանգ շրջանում վտանգը ժամանակին կանխելու եւ գյուղատնտեսական աշխատանքների ժամանակ բնակիչներին տեխնիկական օգնություն ցուցաբերելու ուղղությամբ: Փրկարարների առաջնահերթ նպատակը բնակչության անվտանգության ապահովումն է:

ՎԵՐՄԻՇՅԱՆԸ ԴԱՏԱՊԱՐՏՎԵՑ

Երեւանի ընդհանուր իրավասության դատարանը՝դատավոր Մնացական Մարտիրոսյանի նախագահությամբ, մեղավոր ճանաչեց Վահագն Վերմիշյանին առաջադրված մեղադրանքում՝դատապարտելով ազատազրկման՝8 տարի ժամկետով: Հիշեցնենք, որ, ըստ առաջադրված մեղադրանքի, Վահագն Վերմիշյանը, 2019 թվականի մարտի 21-ից զբաղեցնելով ՀՀ քաղշին կոմիտեի նախագահի պաշտոնը, 2019թ. սեպտեմբերից մինչեւ 2020թ. փետրվարի 5-ն ընկած ժամանակահատվածում, իր պաշտոնեական դիրքը ծառայության շահերին հակառակ օգտագործելով, չարաշահել է իր պաշտոնեական լիազորությունները՝խախտելով «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի պահանջները, որն է՝հանրային պաշտոն զբաղեցնող անձինք եւ հանրային ծառայողները չեն կարող զբաղեցնել որեւէ պաշտոն առեւտրային կազմակերպություններում, զբաղվել է ձեռնարկատիրական գործունեությամբ, ինչպես նաեւ ստացել է խոշոր եւ առանձնապես խոշոր չափերի հասնող կաշառք, պաշտոնեական դիրքն օգտագործելով՝ խարդախությամբ հափշտակել ուրիշի՝խոշոր չափերի հասնող գույքը:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝մայիսի 12-ից 15-ը Հայաստանի Հանրապետությունում բացահայտվել է հանցագործության 130 դեպք, որոնցից 5-ը՝նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐՔ

ՀԻՎԱՆԴՆԵՐԸ ԴԺԳՈՀՈՒՄ ԵՆ

Իջեւանի բժշկական կենտրոնում բուժվող հիվանդները լրագրողիս բողոքել են, որ այդ մեծ հիվանդանոցում հիվանդների համար լողանալու հնարավորություն չկա, ինչը մեծ անհարմարություններ է առաջացնում այդ առողջապահական հիմնարկում երկար ժամանակով բուժվողների համար: Իջեւանի բժշկական կենտրոնում հիվանդասենյակների պատերից կախված են հեռուստացույցի տակդիրներ, սակայն ոչ մի հիվանդասենյակում հեռուստացույց չկա, որ հիվանդները, հեռուստացույց նայելով, շեղվեն իրենց առողջական վիճակից: Հիվանդասենյակներում օդափոխիչներ չկան, հիվանդները խեղդվում են շոգից, ծանր օդից, մինչդեռ Իջեւանի ԲԿ-ն հիմնանորոգելու համար հսկայական փողեր են ծախսվել: 2010թ. ապրիլի 9-ին Սերժ Սարգսյանի մասնակցությամբ տեղի ունեցավ Իջեւանի բժշկական կենտրոնի հիմնանորոգված շենքերի բացման արարողությունը: Բժշկական կենտրոնը վերանորոգվել է կառավարության եւ Համաշխարհային բանկի ֆինանսավորմամբ՝ ՀՀ նախագահի՝ մարզերի համաչափ զարգացման ծրագրի շրջանակում, աշխատանքների վրա ծախսվել է ավելի քան 2 մլն ԱՄՆ դոլար: 2023թ. ապրիլի 29-ին վարչապետ Նիկոլ Փաշինյանն այցելել է Իջեւանի բժշկական կենտրոն, որտեղ հիմնվել են համակարգչային տոմոգրաֆիայի եւ հեմոդիալիզի բաժանմունքներ, այդ նպատակով ծախսվել է 223 միլիոն դրամ:

ՆԱԽԱՏԵՍՎԱԾ Է 2024Թ.-Ի ՀԱՄԱՐ

Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանին տեղեկատվական հարցում եմ ուղարկել՝ հարցնելով, թե Տավուշի մարզպետարանն ինչ միջոցներ է ձեռնարկել, որպեսզի Լոռու մարզում գործող հանքարդյունաբերական ձեռնարկությունների արտադրական թափոններում պարունակվող ծանր մետաղներով աղտոտված Դեբեդի ջրով ոռոգվող Նոյեմբերյան համայնքի Արճիսի, Այրումի, Լճկաձորի, Հաղթանակի, Պտղավանի, Դեղձավանի, Բագրատաշենի, Դեբեդավանի հողատարածքների ու այգիների կրած վնասների համար Նոյեմբերյան համայնքը այդ ձեռնարկությունների վճարած բնապահպանական վճարներից փոխհատուցում, դրամական հատկացում ստանա: Մարզպետարանից ստացված պատասխանում նշված է. «Վարչապետի՝ 2023 թվականի հունվարի 26-ի «Հայաստանի Հանրապետության 2024 թվականի բյուջետային գործընթացը սկսելու մասին» N86-Ա որոշմամբ հաստատված ժամանակացույցի 3-րդ կետի հանձնարարականի համաձայն՝ «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական հարկի նպատակային օգտագործման» ՀՀ օրենքի 1-ին հոդվածում նշված ընկերությունների գործունեության հետեւանքով վնասակար ազդեցության ենթարկվող համայնքների ցանկի մեջ ընդգրկված է Նոյեմբերյան համայնքը (2024 թվականի համար)»:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ԳՈՒՄԱՐ Է ՊԱՀԱՆՋՈՒՄ

ԵՊՀ ՌԵԿՏՈՐԸ ՀԱՂԹԵԼ Է ԼՐԱՏՎԱՄԻՋՈՑՆԵՐԻՆ

ԵՊՀ ռեկտոր Հովհաննես Հովհաննիսյանը դիմել է դատարան եւ հայց ներկայացրել մի քանի լրատվամիջոցների դեմ, գումար պահանջել նրանցից իրեն զրպարտելու համար: Արդյունքում դատարանը կայացրել է որոշում.

«1. Հովհաննես Վահագնի Հովհաննիսյանի հայցն ընդդեմ «Երեւան Թոդայ» լրատվական կայքի, «Մեդիա Պլյուս» ՍՊ ընկերության, «Պոլիտիկ Էյ Էմ» լրատվական կայքի, «Ազատ խոսքի հարթակ» լրատվական հասարակական կազմակերպության՝ զրպարտություն համարվող փաստացի տվյալները հրապարակայնորեն հերքելուն պարտավորեցնելու, վիրավորանքի համար հրապարակայնորեն ներողություն խնդրելուն պարտավորեցնելու, զրպարտության եւ վիրավորանքի համար փոխհատուցման գումար բռնագանձելու պահանջների մասին, բավարարել մասնակի:

1.1. Պարտավորեցնել «Մեդիա Պլյուս» ՍՊ ընկերությանը հրապարակայնորեն հերքել զրպարտություն համարվող տեղեկությունները ներքոշարադրյալ լրատվամիջոցով հետեւյալ բովանդակությամբ եւ կարգով. https://yerevan.today/ լրատվական էլեկտրոնային կայքում հրապարակել հետեւյալ տեքստը. «10.08.2021 թվականին հրապարակված՝ ««ԵՊՀ ռեկտորի պաշտոնակատարը գրագողությամբ կենսագրություն է կեղծել» վերտառությամբ հոդվածում եւ «Սկանդալ է հասունանում ԵՊՀ ռեկտորի պաշտոնակատարի շուրջ» վերտառությամբ հոդվածում Հովհաննես Վահագնի Հովհաննիսյանի վերաբերյալ հրապարակվել են զրպարտություն պարունակող արտահայտություններ՝ կենսագրությունը կեղծելու եւ դոկտորական ատենախոսության գրագողության մասին, որոնք չեն համապատասխանում իրականությանը»: Հերքումն իրականացնել «Հերքում» խորագրի ներքո, որն իր տեղակայման, ձեւավորման, տառատեսակի չափի ու տեսակի, հաղորդման ժամի առումով չպետք է զիջի այն տեղեկատվությանը, որին վերաբերում է:

Լրատվական համապատասխան կայքում հերքումը հրապարակելու անհնարինության դեպքում հերքումն իրականացնել առնվազն 1000 տպաքանակ ունեցող լրատվության միջոցում կամ նման լրատվամիջոցի կայքում:

1.2. «Մեդիա Պլյուս» ՍՊ ընկերությունից, հօգուտ Հովհաննես Վահագնի Հովհաննիսյանի, բռնագանձել 500.000 ՀՀ դրամ՝ որպես զրպարտությամբ պատճառված վնասի փոխհատուցում: Հովհաննես Հովհաննիսյանի հայցը՝ մնացած մասով, մերժել:

2. Թիվ ԵԴ/37855/02/21 քաղաքացիական գործի վարույթն ըստ հայցի՝ Հովհաննես Վահագնի Հովհաննիսյանի ընդդեմ «Երեւան Թոդայ» լրատվական կայքի եւ «Պոլիտիկ Էյ Էմ» լրատվական կայքի, զրպարտություն համարվող փաստացի տվյալները հրապարակայնորեն հերքելուն պարտավորեցնելու, վիրավորանքի համար հրապարակայնորեն ներողություն խնդրելուն պարտավորեցնելու, զրպարտության եւ վիրավորանքի համար փոխհատուցման գումար բռնագանձելու պահանջների մասին, կարճել՝ վեճը քաղաքացիական դատավարության կարգով դատարանում քննության ենթակա չլինելու հիմքով:

2. «Մեդիա Պլյուս» ՍՊ ընկերությունից, հօգուտ Հովհաննես Վահագնի Հովհաննիսյանի, բռնագանձել 14.000 ՀՀ դրամ՝ որպես բավարարված հայցի մասով պետական տուրքի նախապես վճարված գումար: «Մեդիա Պլյուս» ՍՊ ընկերությունից, հօգուտ Հովհաննես Վահագնի Հովհաննիսյանի, բռնագանձել 50.000 ՀՀ դրամ՝ որպես փաստաբանի խելամիտ վարձատրության գումար: Դատական ծախսերի հարցը՝ մնացած մասով, համարել լուծված: 3. Վճիռը կամովին չկատարելու դեպքում այն կկատարվի ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ծառայության միջոցով՝ պարտապանի հաշվին: Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից մեկ ամիս հետո եւ նույն ժամկետում կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան»:

Ք. Մ.

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

ԾԱՎԱԼՈՒՆ ԾՐԱԳՐԵՐ ԵՆ ՆԵՐԿԱՅԱՑՐԵԼ

Երեւանի քաղաքապետարանից հայտնում են.

-Նոր կառուցված ճանապարհները սպասարկելու առնչությամբ զեկուցվել է, որ ամբողջությամբ փոխվելու է աշխատանքի մեթոդաբանությունը: Այսուհետ փոսալցման, գծանշման, նշանների տեղադրման ու հենապատերի փոփոխման համար առանձին մրցույթներ չեն լինելու. ամբողջ գործընթացն իրագործելու է «Ճանշինը»:

Հանձնարարվել է վերանայել գծանշման պահանջները՝ ապահովելով բարձրորակ նյութերի օգտագործում, ինչի շնորհիվ արվածը կծառայի ավելի երկար:

-Երեւանի քաղաքապետարանը Կադաստրի կոմիտեի հետ կճշգրտի մայրաքաղաքի սահմանները: Հանձնարարվել է այս եւ քաղաքաշինական մյուս ծրագրերում աշխատանքները կազմակերպել մեկ ընդհանուր սկզբունքով՝ օգտագործելով էլեկտրոնային GIS (աշխարհագրական տեղեկատվական համակարգ) համակարգը:

Կադաստրի կոմիտեի հետ համայնքը կքննարկի նաեւ Կոնդ թաղամասի բնակիչների տների եւ հարակից տարածքների սահմանների ճշգրտման ու չափագրման խնդիրը:

-Երեւանի բնակֆոնդի թարմացման, վթարային շենքերի վերականգնման նպատակով համայնքը կհամագործակցի կառուցապատողների հետ: Շահագրգռությունը մեծացնելու նպատակով առաջարկվել է դիտարկել ոչ թե մեկ շենքի, այլ բակի տրամաբանությունը, որը կներառի մի քանի շենք եւ հնարավորություն կտա բնակիչներին հարմարավետ տարբերակով բարելավելու իրենց բնակարանային պայմանները:

-Համայնքային մանկապարտեզներում նախատեսվում է ներդնել երկարօրյա ծառայություն, ինչն աշխատող ծնողներին հնարավորություն կտա երեխաներին վերցնել աշխատանքային ժամերից հետո: Թե որ ծառայությունը ինչ սկզբունքով կմատուցվի՝ հավելյալ վճարով, թե այլ տրամաբանությամբ, քաղաքային իշխանությունը դեռ կքննարկի:

-Վարչական շրջանների ղեկավարները ներկայացրել են այգիների, բակային տարածքների բարեկարգման ու հիմնանորոգման աշխատանքների ու ծավալուն ծրագրերի ընթացքը:Հաշվի առնելով քաղաքում օդի աղտոտվածության մակարդակը՝ հանձնարարվել է որպես պարտադիր պահանջ սահմանել շինարարական աշխատանքների ընթացքում փոշու որսիչ ցանցերի առկայությունը եւ իրականացնել խիստ հսկողություն:

-Գործարկման է պատրաստ քաղաքապետարանի կողմից իրականացվող նախագծերի վերաբերյալ բնակիչների կարծիքները գրանցելն ապահովող առցանց հարթակը: Հանձնարարվել է այդ հարթակում նոր առաջարկներ ներկայացնելու հնարավորություն ստեղծել:

● Անցած 3 օրվա ընթացքում հանրապետությունում արձանագրվել է 34 ՃՏՊ. 1 մարդ զոհվել է, 42-ը՝ ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ (2)

ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

«Բի էս Թի» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կազմակերպիչ) «ԵՐԵՎԱՆԻ ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ԲՈՐՍԱ» ՍՊԸ -ի հարթակում իրականացնելու է բաց աճուրդ՝ հոլանդական եղանակով: Աճուրդի ընթացքում վաճառվելու են «Ամերիաբանկ» ՓԲԸ-ին գրավի իրավունքով պատկանող հետեւյալ լոտերը.

- ք. Երեւան, Շենգավիթ, Շարուրի փողոց, 37/31 հասցեում գտնվող 1793 ք.մ. պահեստ, 11,7 ք.մ. /35,1 խ.մ./ պարիսպ եւ 0,45015 հա հողամաս: Առկա են 109,20 ք.մ. ինքնակամ անտրեսոլ եւ աստիճաններ: Լոտի մեկնարկային գինը՝ 301600000 ՀՀ դրամ:
- ք. Երեւան, Շենգավիթ, Շարուրի փողոց, 37/36 հասցեում գտնվող 867,3 ք.մ. պահեստ, 145 ք.մ. պահեստ, 33,7 ք.մ. /101,1 խ.մ./ պարիսպ եւ 0,23974 հա հողամաս /0,23974 հա հողամասից 0,06044 հա հողամասը օգտագործվում է որպես ընդհանուր ճանապարհ/: Լոտի մեկնարկային գինը՝ 160700000 ՀՀ դրամ:

Լոտերի նկատմամբ սահմանափակումները՝ գույքերը գրավադրված են:

Աճուրդի փուլերը՝ հոլանդական եղանակով, ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցեում 01.06.2023թ.-ին, ժ. 12:00-ին, այնուհետեւ հոլանդական եղանակով կայացվող աճուրդի յուրաքանչյուր հերթական փուլը կանցկացվի յուրաքանչյուր հաջորդ աշխատանքային օրը, նույն վայրում, նույն ժամին: Աճուրդի ավարտը՝ 29.12.2023թ: Աճուրդի մասնակցության նախավճարը սահմանված է գույքի ընթացիկ մեկնարկային գնի 1%-ի չափով, որի վճարման վերջնաժամկետը սահմանված է յուրաքանչյուր աճուրդի փուլի օրվան նախորդող աշխատանքային օրվա ժամը 16:00-ն: Նախավճարը վճարվում է «Բի-էսԹի» ՍՊԸ-ի դրամարկղում՝ աճուրդի կայացման հասցեում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կանխիկի շեմը չգերազանցելու դեպքում, կամ բանկային հաշվին («Արդշինբանկ» ՓԲԸ-ում 2470103374150000 հաշվեհամարին), կամ կազմակերպչի կողմից տրված այլ հաշվեհամարին: Աճուրդին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել՝ ֆիզիկական անձանց համար անձը հաստատող փաստաթուղթ եւ Կազմակերպչի կողմից տրված մասնակցի վկայական (այսուհետ՝ աճուրդի վկայական), որը հաստատելու է նաեւ նախավճարի մուծման փաստը, իսկ իրավաբանական անձանց համար՝ կանոնադրությունը, իրավաբանական անձանց պետական գրանցման վկայականը, պաշտոնատար անձի կամ ներկայացուցչի լիազորությունները հաստատող փաստաթուղթ եւ աճուրդի վկայական:

Աճուրդում հաղթող է ճանաչվում այն անձը, ով առաջարկել է ամենաբարձր գինը: Վերջին ամենաբարձր գնային հայտ ներկայացրած մասնակիցը, աճուրդավարի մուրճիկի երրորդ հարվածից հետո, համարվում է աճուրդում հաղթած մասնակից: Աճուրդին մասնակցած, սակայն չհաղթած անձի մուծած նախավճարը վերադարձվում է աճուրդն ավարտվելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում: Նախավճարը ենթակա է վերադարձման, եթե աճուրդը համարվում է չկայացած: Եթե աճուրդում հաղթող ճանաչված անձը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը կամ առուվաճառքի պայմանագիրը, ապա նա կորցնում է իր մուծած նախավճարը: Եթե Կազմակերպիչը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը, ապա նա պարտավոր է աճուրդում հաղթող ճանաչված անձին վերադարձնել նախավճարը:

Լոտերն ուսումնասիրելու ցանկություն հայտնած անձինք կարող են սույն ծանուցման օրվան հաջորդող օրվանից մինչեւ աճուրդի ավարտի նախորդող օրը, յուրաքանչյուր աշխատանքային օր, ժ. 10:00-ից մինչեւ 18:00-ն, այցելել վերը նշված հասցեներով եւ ծանոթանալ լոտերի հետ՝ այցելությունը նախապես համաձայնեցնելով Կազմակերպչի եւ Բորսայի հետ: Հարկային գործակալ հանդիսանալու դեպքում աճուրդում հաղթած մասնակցի կողմից լոտի գնի վճարելու կարգը սահմանվում է վաճառողի հետ՝ փոխհամաձայնեցված ժամկետներում: Սույն ծանուցումը կարող է փոփոխվել մամուլում հրապարակվելու միջոցով:

Աճուրդների անցկացման կանոնակարգին կարող եք ծանոթանալ եւ անվճար ստանալ կանոնակարգի պատճենը, դիմելով Կազմակերպչին՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցե: Բոլոր այլ տեղեկությունների համար կարող եք զանգահարել (011) 56-45-13 հեռախոսահամարով կամ այցելել www.llcbst.am, www.borsa.am կայքերը:

ԻՐԱՔԵԿՈՒՄ

ՊԱՀՊԱՆԵ՛Ք ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ

ՍԱՏՄ-ից ArmLur.am-ին հայտնեցին, որ շուտով կավարտվի ուսումնական տարին, եւ ամառային սեզոնը կազդարարի տարբեր ավարտական էքսկուրսիաների մեկնարկը, որոնք նաեւ բնության գրկում բացօթյա խնջույքների առիթ են:

Սպասվող միջոցառումներին ընդառաջ՝ ՀՀ սննդամթերքի անվտանգության տեսչական մարմինը, հաշվի առնելով նախորդ տարիներին արձանագրված խնդիրները, ինչպես նաեւ թունավորումներից խուսափելու, երեխաների առողջությունը չվնասելու նպատակով հորդորում է ուսուցիչներին եւ ծնողներին պահպանել սննդամթերքի անվտանգության մի շարք պարզ կանոններ եւ հատուկ ուշադրություն դարձնել ձեռք բերվող սննդամթերքին ներկայացվող որոշ պահանջների.

-համոզվե՛ք, որ սննդամթերքը թարմ է,

-նայե՛ք պիտանիության ժամկետներին,

-համոզվե՛ք, որ գնման պահին սննդամթերքը պահվում էր մակնշմանը համապատասխան ջերմային ռեժիմում,

-մի՛ գնեք սննդամթերք փողոցից,

-մի՛ գնեք սննդամթերք, որը չունի մակնշում,

-միս գնելուց պահանջե՛ք անասնաբուժական ձեւ N5 վկայականը:

Փոխադրամիջոցով տեղափոխվող սննդամթերքն անհրաժեշտ է պահել փակ տարաներում, բացառել հում եւ պատրաստի սննդամթերքի շփումը:

Հորդորում ենք հատուկ ուշադրություն դարձնել հատկապես արագ փչացող սննդամթերքին (կաթնամթերք, մսամթերք, ծովամթերք, կրեմային հրուշակեղեն, ըմպելիքներ, արագ սառեցրած մթերք եւ այլն), որոնք ենթակա չեն պահման առանց սառնարանային պայմանների: Հատկապես արագ փչացող սննդամթերքի պահպանման պայմաններն ու ժամկետները խախտելու դեպքում դրանցում կարող են զարգանալ ինչպես մթերքի փչացմանը նպաստող, այնպես էլ սննդային թունավորումներ եւ աղիքային սուր վարակիչ հիվանդություններ առաջացնող ախտածին մանրէներ:

Առաջարկում ենք կենդանական ծագման սննդամթերքը (միս, ձուկ, ձու, մայոնեզ, կաթնամթերք եւ այլն) անպայման պահել-տեղափոխել սառնարան-պայուսակներում, որոնցում ջերմաստիճանային ճիշտ պայմաններ (-2 - +4) կապահովվեն:

Կրեմային հրուշակեղենից առհասարակ հրաժարվե՛ք եւ խուսափե՛ք ճաշակել բարձր ջերմաստիճանի տակ եղած աղցաններ:

Անհրաժեշտ է նաեւ տեղում՝ բնության գրկում հետեւել պատրաստվող սննդամթերքի հիգիենայի պահանջներին, պատրաստման ջերմաստիճաններին եւ տեւողությանը: Նախքան երեխաներին միրգ-բանջարեղեն մատուցելը պետք է պատշաճ լվանալ դրանք խմելու հոսող ջրով եւ ցանկացած սննդամթերք պատրաստել-օգտագործելուց առաջ խաչաձեւ աղտոտումից (ձեռքերի վրա գտնվող բակտերիաներն ու վիրուսները մթերքին փոխանցելուց) խուսափելու նպատակով օճառով լվանալ ձեռքերը:

Հաշվի առնելով սննդային թունավորումների ժամանակ հավի մսի ռիսկայնությունը՝ առաջարկում ենք հավի մսից պատրաստվող կերակրատեսակների ժամանակ առավել ուշադիր լինել, ինչպես պատրատման հիգիենային՝ խաչաձեւ աղտոտում (ոչ պատշաճ լվացված եւ ախտահանված ձեռքեր, հում եւ պատրաստի սննդամթերքի համար օգտագործվող գույք), այնպես էլ պատրաստման ջերմաստիճանին եւ տեւողությանը (մսի խորքում ջերմաստիճանը պետք է հասցնել 65-700C):

Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմինը կոչ է անում պահպանել նշված կանոնները թունավորման հնարավոր ռիսկերը նվազագույնի հասցնելու նպատակով:

ՆԱԻՐԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ (1)

ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

«Բի էս Թի» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կազմակերպիչ) «ԵՐԵՎԱՆԻ ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ԲՈՐՍԱ» ՍՊԸ -ի հարթակում իրականացնելու է բաց աճուրդ՝ հոլանդական եղանակով: Աճուրդի ընթացքում վաճառվելու են «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ-ին (այսուհետ՝բանկ) սեփականության իրավունքով պատկանող հետեւյալ լոտերը՝

- ք. Երեւան, Արաբկիր, Մամիկոնյանց փողոց, 36/8 շենք, 1 հասցեում գտնվող 259.38 ք.մ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 85370000ՀՀ դրամ:
- ք. Երեւան, Արաբկիր, Մամիկոնյանց փողոց, 36/8 շենք, 64 հասցեում գտնվող 83.28 ք.մ. տարածք: Լոտի մեկնարկային գինը՝ 66000000 ՀՀ դրամ:
- ք. Երեւան, Արաբկիր, Մամիկոնյանց փողոց, 36/8 շենք, 19 հասցեում գտնվող 15 ք.մ. ավտոկայանատեղ/հանգրվան: Լոտի մեկնարկային գինը՝5000000 ՀՀ դրամ:
- ք.Երեւան, Արաբկիր, Մամիկոնյանց փողոց, 36/8 շենք, 18 հասցեում գտնվող 15 ք.մ. ավտոկայանատեղ/հանգրվան: Լոտի մեկնարկային գինը՝5000000 ՀՀ դրամ:

Աճուրդի փուլերը՝ հոլանդական եղանակով, ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, 82/31 հասցեում 01.06.2023թ.-ին, ժ. 12:00-ին, այնուհետեւ հոլանդական եղանակով կայացվող աճուրդի յուրաքանչյուր հերթական փուլը կանցկացվի յուրաքանչյուր հաջորդ աշխատանքային օրը, նույն վայրում, նույն ժամին: Աճուրդի ավարտը՝ 29.12.2023թ: Աճուրդի մասնակցության նախավճարը սահմանված է համապատասխան գույքի ընթացիկ մեկնարկային գնի 1%-ի չափով, որի վճարման վերջնաժամկետը սահմանված է յուրաքանչյուր աճուրդի փուլի օրվան նախորդող աշխատանքային օրվա ժամը 16:00-ն: Նախավճարը վճարվում է «Բի Էս Թի» ՍՊԸ -ի դրամարկղումաճուրդի կայացման հասցեում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կանխիկի շեմը չգերազանցելու դեպքում, կամ բանկային հաշվին («Արդշինբանկ» ՓԲԸ-ում 2470103374150000 հաշվեհամարին), կամ կազմակերպչի կողմից տրված այլ հաշվեհամարին: Աճուրդին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել՝ ֆիզիկական անձանց համար անձը հաստատող փաստաթուղթ եւ Կազմակերպչի կողմից տրված մասնակցի վկայական (այսուհետ՝ աճուրդի վկայական), որը հաստատելու է նաեւ նախավճարի մուծման փաստը, իսկ իրավաբանական անձանց համար՝ կանոնադրությունը, իրավաբանական անձանց պետական գրանցման վկայականը, պաշտոնատար անձի կամ ներկայացուցչի լիազորությունները հաստատող փաստաթուղթ եւ աճուրդի վկայական:

Աճուրդում հաղթող է ճանաչվում այն անձը, ով առաջարկել է ամենաբարձր գինը: Վերջին ամենաբարձր գնային հայտ ներկայացրած մասնակիցը, աճուրդավարի մուրճիկի երրորդ հարվածից հետո, համարվում է աճուրդում հաղթած մասնակից: Աճուրդին մասնակցած, սակայն չհաղթած անձի մուծած նախավճարը վերադարձվում է աճուրդն ավարտվելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում: Նախավճարը ենթակա է վերադարձման, եթե աճուրդը համարվում է չկայացած: Եթե աճուրդում հաղթող ճանաչված անձը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը կամ առուվաճառքի պայմանագիրը, ապա նա կորցնում է իր մուծած նախավճարը: Եթե Կազմակերպիչը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը, ապա նա պարտավոր է աճուրդում հաղթող ճանաչված անձին վերադարձնել նախավճարը:

Նախքան աճուրդի ավարտն աճուրդային լոտի նկատմամբ բանկի գրավի կամ սեփականության իրավունքի դադարման հետեւանքով աճուրդի մասնակիցների կորուստների եւ վնասների համար բանկը որեւէ պատասխանատվություն չի կրում:

Լոտերն ուսումնասիրելու ցանկություն հայտնած անձինք կարող են սույն ծանուցման օրվան հաջորդող օրվանից մինչեւ աճուրդի ավարտի նախորդող օրը, յուրաքանչյուր աշխատանքային օր, ժ. 10:00-ից մինչեւ 18:00-ն, այցելել վերը նշված հասցեներով եւ ծանոթանալ լոտերի հետ՝այցելությունը նախապես համաձայնեցնելով Կազմակերպչի եւ Բորսայի հետ: Հարկային գործակալ հանդիսանալու դեպքում աճուրդում հաղթած մասնակցի կողմից լոտի գնի վճարելու կարգը սահմանվում է վաճառողի հետ՝ փոխհամաձայնեցված ժամկետներում: Սույն ծանուցումը կարող է փոփոխվել մամուլում հրապարակվելու միջոցով: Աճուրդների անցկացման կանոնակարգին, լոտերի ամբողջական ցանկին կարող եք ծանոթանալ եւ անվճար ստանալ կանոնակարգի պատճենը, դիմելով Կազմակերպչին եւ Բորսային՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցե: Բոլոր այլ տեղեկությունների համար կարող եք զանգահարել (011) 56-45-13 հեռախոսահամարով կամ այցելել www.llcbst.am, www.borsa.am կայքեր:

«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՄՇԱԿՈՒՅԹ

ԱՐՎԵՍՏԱԳԵՏԸ ՊԵՏՔ Է ԱՌԱՋՆՈՐԴԻ

Խաչատրյանների ընտանիքում ոչ-ոֆեսիոնալ եւ «ոչ ոչոֆեսիոնալ» երաժիշտների դպակաս չի զգացվել: Երգում ու նվագում էին մեծից փոքր: Էդգարն ասում է, որ նման ձայնային լավ տվյալներ ժառանգել է մայրիկից: Հայրը նվագում էր փողային գործիքներ, մայրն էլ հրաշալի կատարում էր ժողովրդական երգեր, չնայած երաժշտական կրթություն չուներ:

Սիրված երգիչ Էդգար Խաչատրյանի հետ զրուցում ենք նրա անցած ուղու, մանկավարժական գործունեության ու հայ երգարվեստի մասին:

-Էդգար, չնայած երիտասարդ տարիքիդ՝ բավականին հարուստ կենսագրություն ունես. համերգային ուղիդ սկսվում է Հարավային Կորեայից մինչեւ Եգիպտոս, Սիրիա, Դուբայ, Թուրքիա, Ռուսաստան, Ուկրաինա, Բելգիա, Ֆրանսիա, Հոլանդիա, Իտալիա, Դանիա, ԱՄՆ: Այս երկներում ներկայացրել ես հայկական ժողովրդական երգը:

-Դե, ինչպես նշեցիք, մեր ընտանիքում երաժիշտների պակաս չէր զգացվում, ու զարմանալի կլիներ, որ ես այլ ուղի ընտրեի: Մեղմ ասած, այլընտրանք լինել չէր կարող. ես պիտի երգեի: Երգել եմ դեռ փոքր տարիքից: Այն օրը ձեռքս ընկավ մի ձայնագրություն՝ 1993 թ.-ի, ու ես արդեն այդ տարիներին պրոֆեսիոնալ բեմեր էի բարձրանում: Սովորել եմ Երեւանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի վոկալ տեսական ֆակուլտետի ժողերգ բաժնի նախապատրաստական կուրսում՝ Հովհաննես Բաղալյանի դասարանում: Մեկ տարի սովորելուց հետո մեկնեցի Հայոց բանակ: Երբ վերադարձա, շատերը խորհուրդ տվեցին, որ ուսումս շարունակեմ որպես օպերային երգիչ: Եվ այստեղ էլ ինձ բախտը ժպտաց. ընդունվեցի Սերգեյ Դանիելյանի դասարան, որն աշխարհահռչակ երաժիշտ Գեղամ Գրիգորյանի ուսուցիչն էր: Որպես մենակատար 2002 թ. ընդունվել եմ Գուսանական երգի պետական անսամբլ, իսկ 2005-ին՝ Թաթուլ Ալթունյանի անվան երգի-պարի պետական անսամբլ: Ինձ համար շատ պարտավորեցնող ու հաճելի է այն փաստը, որ 2011 թ. արժանացա ՀՀ մշակույթի նախարարության Ոսկե մեդալի՝ հայ ազգային երգարվեստում նշանակալի ավանդի համար: 2012 թվականից մասնակցել եմ Հանրային հեռուստատեսության «Երգ երգոց» ծրագրին, որտեղ ձայնագրել եմ տարբեր կոմպոզիտորների ստեղծագործություններ՝ ավելի քան 130 կատարում:

-Էդգար, Մշակույթի նախարարության կողմից արժանացել ես Ոսկե մեդալի, քանի որ հայ երգը լավագույն կերպով ներկայացրել ես աշխարհի տարբեր բեմերում: Զգացողություններիդ մասին կխոսե՞ս:

-Անկեղծ պետք է ասեմ՝ մեծ պատիվ է ինձ համար հայ երգը ներկայացնել այլ երկրներում, հատկապես եղել են շատ դեպքեր, որ հանդիսատեսի շարքերում հայեր քիչ են եղել, ու դահլիճի ծափահարությունից դու արդեն հասկացել ես, որ երգդ ու ասելիքդ տեղ են հասել: Անկեղծ պետք է ասեմ, որ հայ հանդիսատեսը շատ տարբերվող է, առավել խիստ է, բծախնդիր ու ամենաճիշտ դատավորը: Եթե օպերային դահլիճի, «Արամ Խաչատրյան» համերգասրահի հանդիսատեսը քեզ ծափահարում է 15-20 վայրկյան անընդմեջ, ուրեմն դու հաղթել ես:

-Այսօր «երգիչների» մի ստվար զանգված կա, որ երգում է անհասկանալի ելեւէջներով, ադրբեջանական, թուրքական մելիզմներով ու ասում, որ հանդիսատեսը դա է պահանջում: Ճի՞շտ է այն պնդումը, որ հանդիսատեսն ինչ ուզում է, ուրեմն դա պետք է մատուցենք:

-Իհարկե ոչ: Ես համաձայն չեմ այդ մտքի հետ. հանդիսատեսին դու ինչ տալիս ես, դա է պահանջում: Մի փոքրիկ դրվագ պատմեմ. եղել են դեպքեր, երբ ես երգել եմ ռեստորաններում ու պանդոկներում, բայց անգամ այդ դեպքում ես երբեք չեմ երգել այնպիսի երգեր, որոնք անհասկանալի ելեւէջներ ունեն: Օրինակ՝ ամեն երգից առաջ մի փոքր պատմում էի երգից, ու մարդիկ հաջորդ անգամ գալիս էին ու հենց այդ երգն էին պատվիրում: Սա մի փոքր դետալ է: Իսկ, ընդհանրապես, արվեստագետը պետք է իր հետեւից տանի ժողովրդին, ոչ թե գնա նրա հետեւից այն դեպքում, երբ այդ գործի պրոֆեսիոնալն է: Դու պարզապես իրավունք չունես իրենց քամու տակ ծալ-ծալ լինելու: Թող ինձ լսեն 200 հոգի, բայց թող ինձ լսեն ճաշակ թելադրող մարդիկ: Ոչ մեկին չեմ վիրավորում, բայց պետք է միշտ քամուն, գետին հակառակ լողաս ու ճիշտ արվեստ ներկայացնես:

-Էդգար, այս տարիների ընթացքում համագործակցել ու աշխատել ես տարբեր դիրիժորների հետ, նաեւ օպերային նվագախմբի, Հայաստանի ազգային նվագարանների անսամբլի, սիմֆոնիկ նվագախմբի հետ: Դու ժողովրդակա՞ն էդգարին ես սիրում, թե՞ օպերային:

-Անկեղծ պետք է պատասխանեմ. շատ տարբեր են այդ երկու էդգարները, բայց եկեք չառաձնացնեմ: Ինձ ճանաչում են՝ ժողովրդականի էդգար: Ես պարզապես ժողովրդական ու դասական վոկալը միքս եմ արել: Կարելի է ասել՝ հետաքրքիր երգելաոճ եմ ներմուծել, ու ինձ ճանաչում են հենց այդպես՝ ուրույն ձեռագրով ու ոճով:

-Գիտեմ, որ պարբերար եղել ես ժյուրիի անդամի կարգավիճակում ու հաճախ գնահատել ես նաեւ քո ընկերներին: Դժվար չէ՞ օբյեկտիվություն պահպանել:

-Իհարկե դժվար է. ժյուրիի անդամ լինելու համար նախ պետք է լինել չափազանց լավ պատրաստված ու պրոֆեսիոնալ, մեծ պաշար պետք է ունենալ երաժշտության ոլորտում, հատկապես որ հիմա շատ են աղավաղում դասական երգերը: Իսկ երբ նույն անդամի կարգավիճակում քո կողքին են ոլորտի պրոֆեսոնալները՝ Արզաս Գրիգորյանը, Նորայր Դավթյանը, Դավիթ Ղազարյանը, Ժիրայր Ալթունյանը, դու պարզապես իրավունք չունես սխալ դատելու:

-Էդգար, այժմ ապրում ու գործունեություն ես ծավալում ԱՄՆ-ում՝ տարածելով հայկական ժողովրդական եւ դասական երգարվեստը: Ամերիկայում բավականին բարդ է, քանի որ շուկան շատ բազմաժանր է: Քեզ հաջողվո՞ւմ է պահել այն նշաձողը, որ սահմանել էիր Հայաստանում:

-Ամեն ինչ ժամանակի հետ գալիս է: Դժվար է, բայց ոչ անկարելի: Գիտե՞ս՝ ինչի նման է. երբ սարի վրայից փոքր ձնագունդը գլորվում է ու հետո դառնում է մեծ ձնակույտ: Նախորդ տարի՝ դեկտեմբերի 2-ին, մեծն Եղիշե Չարենցի 125-ամյակին նվիրված երեկո էր: Ես այդ համերգի ընթացքում կատարեցի բավականին բարդ ու ոչ այդքան լսված երգեր: Եվ որքան մեծ էր զարմանքս, երբ դահլիճում շատերը գիտեին այդ երգերը ու ինձ հետ հավասար ձայնակցում էին: Մյուսը Սայաթ-Նովա երգչախմբի յուրահատուկ համերգն էր Գլենդելում, որտեղ ես ներկայացնում էի մեծն կոմպոզիտորներ Խաչատուր Ավետիսյանի, Առնո Բաբաջանյանի ստեղծագործությունները սինֆոջազ օրկեստրի հետ միասին: Դահլիճը լեփ-լեցուն էր, ու ամեն կատարումից հետո քեզ եկող ծափերը վկայությունն էին, որ մաքրամաքուր հայ երգը միշտ իր տեղն ու դերն ունի: Դու պարզապես պետք է կարողանաս այս բազմաժանր շուկայում տեղդ գտնել:

-Գիտեմ, որ Հայաստանում մանկավարժական գործունեություն չէիր ծավալում, բեմը հայրենիքում առաջնային պլանում էր: ԱՄՆ-ում, սակայն, մի փոքր փոխվել են դերերը. մանկավարժ Էդգար Խաչատրյանն է առաջ եկել:

-Անկեղծ պետք է ասեմ, որ մի քանի տարի առաջ մանկավարժությունը ընդհանրապես չէր ձգում, բայց հիմա զգում եմ, որ գիտելիքներս պետք է փոխանցեմ սերունդներին. ասելիք ունեմ: Երբեմն նայում եմ հեռուստատեսային մրցույթներ ու, անկախ ինձանից, ուզում եմ էկրանից այն կողմ մի բան ասել: Այժմ արդեն ունեմ իմ աշակերտները, որոնց հետ անհատական պարապում եմ: Եվ, ի ուրախություն ինձ, Գլենդելի մի քանի տարբեր դպրոցներից պարբերաբար հրավիրում են վարպետության դասեր անցկացնելու: Հայ երեխաներին ծանոթացնում եմ Կոմիտասի, Սայաթ-Նովայի, Խաչատուր Ավետիսյանի եւ այլոց անցած ուղին: Բայց հիմա այլ պլաններ էլ ունեմ. մի քանի երգիչների հետ ուզում եմ ձայնագրել «Ես այն անձի դուռը կերթամ, ով խոսում է հայերեն» երգը, որի հիման վրա էլ կնկարահանվի տեսահոլովակ: Նման երգերը պետք է շատ հնչեն:

ԼԻԴԱ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

ԼՈՒՐԵՐ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայտարարություն՝ ավարտական փաստաթղթի կորուստի վերաբերյալ

Դիպլոմի տվյալներն են՝ «ՀԱՅԲՈՒՍԱԿ» ԵՐԵՎԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ (ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ), Հ41344 գրանցում N 1184, Մարիամ Հայրապետյան:

ՎՍՏԱՀ ԳԻՏԻ ԵՐԵԽԱՅԻ ՄԵՌԸ

Ալեքսիս Օհանյանը վստահ է, որ կրկին աղջիկ է ունենալու: Օրերս հայտնի դարձավ, որ Օհանյանն ու Սերենա Ուիլյամսը սպասում են իրենց երկրորդ երեխային: Հեռուստալրագրող Քրիս Ուոլեսին տված հարցազրույցում Օհանյանն ասել է, որ «համոզված է», որ երեխան աղջիկ է լինելու:

«Համոզված եմ, որ աղջկա հայր եմ դառնալու»,- ասել է նա՝ պատասխանելով Ուոլասի հարցին: Օհանյանը խոստովանել է, որ դեռ չգիտեն երեխայի սեռը, բայց կանխատեսել՝ «...եթե մենք 50 երեխա էլ ունենանք, նրանք բոլորն աղջիկ կլինեն»:

Ջույգն իր երկրորդ հղիության մասին հայտարարել էր 2023 թվականի Met Gala-ի ժամանակ՝ մայիսի 1-ին՝ միաժամանակ Instagram-ում հրապարակելով Ուիլյամսի լուսանկարը, որտեղ երեւում էր նրա փորը: Ավելի ուշ Ուիլյամսը նշել է, որ իրենք դստեր՝ Ալեքսիս Օլիմպիայի հետ նորությամբ կիսվել են գալայից անմիջապես առաջ, քանի որ նա «գաղտնիքներ պահել չի կարող»:

Ուիլյամսն իր Instagram-ում տեսանյութ է տարածել, որում նա եւ Օհանյանն իրենց դստերը՝ Օլիմպիային, ասում են, որ նա մեծ քույր է դառնալու:

ԳԻՆԵՍԻ ՌԵԿՈՐԴ

K-pop NewJeans խումբը Գինեսի ռեկորդ է գրանցել՝ Spotify-ում հասնելով 1 միլիարդ լսումի: Նախկինում ռեկորդը պատկանում էր BTS-ի Չոնգուկին եւ BLACKPINK-ի Լիսային: Հինգ հոգուց բաղկացած աղջիկների խմբին 219 օր է պահանջվել հսկայական թվին հասնելու համար:

Չոնգուկը վերջին արտիստն էր, որը սահմանեց ռեկորդը՝ 409 օրում հասնելով 1 միլիարդ լսումի: Այս արդյունքը գրանցվել էր 2023 թվականի մարտի 27-ին: Լիսան նշաձողին հասել էր 2022 թ.-ի հոկտեմբերի 26-ին 411 օրվա ընթացքում: Որպես համեմատություն նշենք, որ Մայլի Սայրուսի «Flowers»-ը՝ նրա «Endless Summer Vacation» ալբոմի առաջատար սինգլը, հունվարի 12-ին՝ թողարկումից ընդամենը 112 օրվա ընթացքում, հատել էր մեկ միլիարդի շեմը: Բայց չմոռանանք, որ Սայրուսը ձայնագրում է իր ութերորդ ալբոմը եւ 2006 թվականից ելույթ է ունենում միջազգային երաժշտական ասպարեզում: Իսկ NewJeans-ը դեռ պետք է թողարկի իր դեբյուտային ալբոմը:

● *Մայիսի 17-ին «Գոյ» թատրոնում տեղի կունենա «Դեպի վերջ» թատերական ներկայացումը: Տոմսերի արժեքը՝ 3000 դրամ: Սկիզբը՝ ժամը 19:00-ին:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ԿԱՐԳ

ՀԱՐՑ. Ուզում եմ իմանալ՝ վայրի կենդանիների՝ 3-րդ երկիր արտահանման դեպքում թույլտվություն կամ լիցենզիա պահանջվում է, թե ոչ:

Իսկուհի Հայթայան (33 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Քաղաքացու հարցին ի պատասխան՝ տեղեկացնում ենք, որ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի փետրվարի 5-ի «ՀՀ մաքսային տարածքով փոխադրման համար արգելված եւ սահմանափակումների ենթակա որոշ ապրանքների ցանկերը, ապրանքների արտահանման եւ ներմուծման լիցենզիայի եւ հայտի ձեւերը հաստատելու, որոշ ապրանքների արտահանման եւ ներմուծման լիցենզիաների տրամադրման առանձնահատկությունները սահմանելու եւ ՀՀ կառավարության 2007 թվականի մարտի 15-ի N327-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» N90-Ն որոշման համաձայն՝ վայրի կենդանիները, որոնց տեղափոխումը Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածքով սահմանափակ է արտահանման դեպքում, ներառված են Հայաստանի Հանրապետության կողմից երրորդ երկրների հետ առեւտրի դեպքում սահմանափակումների ենթակա ապրանքախմբերի ցանկի մեջ:

Այս ապրանքների արտահանման համար լիցենզավորման գործընթացը համակարգող լիազոր պետական համակարգող մարմինը ՀՀ բնապահպանության նախարարությունն է:

ՀՀ պետական եկամուտների կոմիտե

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Լիցենզիան լիցենզավորման ենթակա գործունեության տեսակով զբաղվելու իրավունքը հաստատող պաշտոնական թույլտվություն է, ինչպես նաեւ այդ իրավունքը հաստատող պաշտոնական փաստաթուղթ, որը լիցենզավորող մարմնի կողմից տրվում է իրավաբանական անձին կամ անհատ ձեռնարկատիրոջը:

Էջը՝ ՌՈԶԱ ՊՈՂՈՍՅԱՆԻ

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՐՑ. Հետաքրքիր է իմանալ՝ արդյոք պետք է անշարժ գույքի պետական գրանցման կամ տեղեկատվություն ստանալու համար դիմումները ներկայացվեն այն սպասարկման գրասենյակ կամ օպերատորի մասնաճյուղ, որի սպասարկման տարածքում գտնվում է դիմումի առարկա անշարժ գույքը:

Ստեփան Տիգրանյան (41 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման կամ տեղեկատվության տրամադրման դիմումները կարող են ներկայացվել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի ցանկացած սպասարկման գրասենյակ կամ օպերատորի մասնաճյուղ՝ անկախ անշարժ գույքի գտնվելու վայրից: Նույնը վերաբերում է նաեւ ներկայացված դիմումի հիման վրա կազմված փաստաթղթերի ստացմանը, որոնք կրկին կարելի է ստանալ ինչպես դիմումը ընդունած, այնպես էլ ցանկացած այլ սպասարկման գրասենյակից կամ օպերատորի մասնաճյուղից:

ՀՀ կադաստրի կոմիտե

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման կամ տեղեկատվություն ստանալու համար դիմողներին տրամադրվող ստացականում նշվում է դիմումի մուտքագրման համարը, որը միաժամանակ հանդիսանում է նաեւ ծածկագիր, որի օգնությամբ դիմողը հնարավորություն կունենա ՀՀ կադաստրի պետական կոմիտեի պաշտոնական կայքէջի միջոցով հետեւել իր դիմումի քննարկման ընթացքին:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից

Երեւանցիները ստեղծագործ լուծում են գտել մեքենաների անվտանգության համար:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ ԱՆՎՃԱՐ:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրակ	- 2 + 2 +13 + 17
Կոտայքի լեռներ	- 2 + 2 +12 + 16
Կոտայքի նախալեռներ	+ 5 + 7 +16 + 19
Գեղարքունիք	- 2 + 2 + 8 + 12
Լոռի	+ 0 + 5 +16 + 19
Տավուշ	+ 3 + 8 +18 + 22
Արագածոտնի լեռներ	- 2 + 1 +14 + 17
Արագածոտնի նախալեռներ	+ 4 + 7 + 16 + 20

Արարատ	+7 + 9 +21 + 23
Արմավիր	-1 +8 +10 + 13
Վայոց ձորի լեռներ	+ 6 + 7 +18 + 20
Վայոց ձորի նախալեռներ	+6 +8 +19+ 22
Սյունիքի հովիտներ	+5 + 9 +16 + 20
Սյունիքի նախալեռներ	- 1 + 4 +13 + 16
Արցախ	+ 7 + 10 +16 + 20
Երեւան	+6 + 8 +20 + 22

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ա.

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝**010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **15.5.2023**
Հասցեն՝ Գերաքրքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ. Հովսեփյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*